ՆՈՐ-ԴԱՐ

№ 92 ՀՈՐՈՎՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի 11 Յունիսի **1887** Հինգշաբթի 11 Յունիսի ՀՈՐՈՎՈՐԴ ՏԱՐԻ № 92

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ., ամիսը՝ 1 ր. 50 կ., հատով՝ 5 կոպէկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմայն կամբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների գնաւն 2 կ., ընկալիների համար կրկնապատիկ։

«Նոր-Դար»-ին յունիսի 1-ից բաժանորդ են գրվում և վճարում են 6 ր. 50 կոպէկ։

Հասցէների փոփոխելու համար ուղարկում են կամբագրութեանս 7 հատ եօթը կոպէկանոց մարկա։

Հասցէն Тифлисъ, Редакція «Норъ-Даръ».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրանիկոն.—Լուրեր։
Թղթակցութիւններ.—Երևան։
Քաղաքական.—Լուրեր։
Խառն լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրները։
Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Իր ժամանակին «Նոր-Դար»-ի ընթերցողներին հաղորդել ենք, որ 1882 թուից, այսինքն Կովկասից փոխարքայութիւնը վերջացնելու օրից սկսած սկսան բաղմանալ պետութեան հաստատութիւնների քննութեան ենթարկուող գործերի թիւը, որոնք 1883-ին Կովկասի կառավարութեան համար կազմած օրինագծի զօրութեամբ չեն կարող իրենց լուծումը ստանալ Կովկասի կառավարչապետի խորհրդի մէջ։ Այդ բանը չատ անյարմարութիւններ առաջ բերից՝ մանաւանդ որ Կովկասն էլ չատ հեռու լինելով մայրաքաղաքից, գործերի ընթացքը դանդաղանում էր։ Ահա այդ անյարմարութիւնների առաջն առնելու համար առաջարկուեցաւ, որ ներքին գործերի մինիստրը Կովկասի կառավարչապետի հետ համաձայնութիւն կայացնելով, որոշից այն գործերը, որոնց քննութիւնը կարեոր է և հնարաւոր է թողնել կառավարչապետի և նրա խորհրդի որոշման։

Այն տարուայ մայիսի սկիզբներում պետական խորհրդի պետական անտանութեան և օրէնքների միացեալ դեպարտամէնտում քննվում է ներքին գործերի մինիստրի հաղորդագրութիւնը կառավարչապետի, նրա խորհրդի, նահանգապետների և չրջանների կառավարիչների իրաւասութեան սահմանների մասին։

«Кав.» թերթին հաղորդում են այժմ այդ մասին, որ օրէնքների և պետական տնտեսութեան միացեալ դեպարտամէնտները ենթադրել են.—օրէնդրութեան մի քանի որոշեալ յօդուածները փոխելով որոշել. I Կովկասի կառավարչապետին, բացի Կովկասի կառավարութեան հաստատութիւնքերի նրա ունեցած իրաւունքներից և պարտաւորութիւններից (օր. II հ. II մ. տիպ. 1886 թ.), իրաւունք է տրվում իր իրաւասութեան տակ եղած երկրներում կարգադրելու. ա. օտարահպատակներին, որոնք իրենց վատ վարքի, կասկածաւորութեան և այլ պատճառներով կարող չեն մնալ պետութեան մէջ, արտաքսել երկրից և այդ մասին անմիջապէս յայտնել ամեն անգամ ներքին գործերի մինիստրին, բ. արգիլել ոչ-տեղացի բնակիչներին, որոնք՝ հասարակական կարգի և ապահովութեան համար վտանգաւոր են ճանաչուած, արգիլել Թիւրքիայի և Պարսկաստանի սահմանակից գծերում ապրելը, գ. Անդրկովկասի զինուորական հասարակութիւններին, ոչ-բարենպատակ վարմունքի և գործերի համար, զրկել զինուորական մի զինուորականի (տաբշինա) կամ զինուորական վարչութեան բոլոր անդամներին էլ ընտրելու իրաւունքից. ը. Առանձին ուշադրութեան արժանի դէպքերում, Թիֆլիսից դուրս հրատարակուող թերթերի զրաքննութիւնը չանձնել վոխ-նահանգապետին կամ մի ալ բարեմիտ անձի, նոյնպէս և Կովկասում տեղական լեզուներով հրատարակուող թերթերին զրաքննական օրէնդրութեան 154 յօդուածով (1886 թ.) որոշուած պատժի ենթարկել. թ. Թողատրել՝ 1) քաղաքային վարչութեան անդամ ընտրուողներին երեք կարգի փոխարէն երկու կարգ բաժանելու. 2) մի դաւանութիւնից միւսը անցնելու, որ որոշուած է հոգևոր գործերի ալլակրօններին վերաբերեալ օրէնդրութեան 6-րդ յօդուածով (տիպ. 1857 թ.). 3) Թոյլ տալ Կովկասի ուսումնարանական չրջանի հոգաբարձուին, որ լուսաւորութեան մինիստրութեան ենթարկուող ծխական ևառարական ուսումնարանների համար պատուաւոր վերահսկողներ նշանակել. 6) Մուռածների դիակները դերեզմաններից հանելու կամ արտասահմանից բերելու. 7) Թոյլատրուած պարբերական հրատարակութիւնների դուրս գալու ժամանակամիջոցը փոխելու կամ այդպիսի հրատարակութիւնների խմբագրին ժամանակաւորապէս ուրիչ խմբագրի փոխարինումը. 8) Թոյլ տալ, որ այդ երկրում ապրող անձերին առանց կէնզուրնայի ենթարկուելու՝ արտասահմանեան հրատարակութիւններ ստանալ...

—

ԿԱԽԻՑ.—Արգէն տեղիս քահանան հեռացաւ Նուխի, բայց դեռ նրա տեղ նշանակուած չէ նորը։ Ցոյս ունինք, որ Նուխիի հոգևոր կառավարութիւնը մի լաւ քահանայ կուղարկէ մեզ։

Աչատեղ բաժին առնողներ 2 հոգի են և բաւականի թաց բաժին են առել տասնից սկսած մինչև տասն չորս րուբլի։

Շրջակայ գիւղերում տեղ-տեղ երևում է մորեխ, բայց անվնաս է, գիւղացիները կոտորում են մորեխները։ Կարկտից վատութեանը քիչ վնասուած է։ Այս տարի խաղողից լաւ կայ ակսա չիրայ սառնալու։

—

Պետական կալուածների մինիստրութիւնը, Կովկասի աղահանքերի մասին ճիշտ տեղեկութիւններ հաւաքելու համար, «Новое Обозрѣніе»-ի տեսլով, առանձին ատեստանաւոր է ուղարկում։

—

Թիֆլիսի քաղաքային խորհուրդը յունիսի 8-ին կայացրած նիստում քննեց չինարարական չանձնաժողովի մի զեկուցումը, որ վերաբերում էր անցեալ մարտին Կուրի ջրերը բարձրանալուց Ավճալայի ջրանցքի ճանապարհը փչանալուն և միւսը, քաղաքային վարչութեան առաջարկութիւնն էր՝ ջրանցքի քանդուածները և պակասները չինելու համար լրացուցիչ գումար նշանակել։ Ցանձնաժողովը մանրամասն ցոյց տալով Ավճալայում ջրանցքի քանդուածքի պատճառները, առաջարկում է նրանց չինելու համար նշանակել 18,500 րուբլի։ Այդ առաջարկութիւնը երկար վիճաբանութիւնների պատճառ դարձաւ. բայց որովհետև ջրանցքի չինութեան գործը կարելի չէր ևս ձգել, ուստի քաղաքային վարչութեան զեկուցումն էլ լսելուց ևերա վերայ վիճելուց յետոյ, քաղաքացիները քուէի դրեց երկու առաջարկութիւնն էլ, որոնք ձայների մեծամասնութեամբ ընդունուեցան։ Քաղաքային վարչութիւնը առաջարկում էր լրացուցիչ գումար—35,246 ր. 5 կոպէկ, ուրիշն երկու առաջարկութիւնները միասին քաղաքային խորհուրդը ընդունելով՝ քուէարկից 53,746 ր. 5 կոպէկ։

—

Ֆինանսների մինիստրութիւնը, մայրաքաղաքի թերթերի ասելով, այժմ զբաղուած է գազային և օդային լուսաւորութեան առաջարկութիւնների հետ։ Ասում են, թէ մինիստրութիւնը պատրաստում է մի պարտի առանց տոկոսի փոխ տալ 250 հազար րուբլի փող, որպէս զի նա Կուրից ջուր մատակարարէ զինուորներին և զինուորական հաստատութիւններին, բայց չետոյ, երբ քաղաքային ջրանցքի խնդիրը բարձրացաւ, Կովկասեան չրջանի ինժեներների կառավարիչը առաւելութիւն տալով ջրանցքի ջրին, թողեց այդ մտադրութիւնը, առաջարկում էր, որ քաղաքը մատակարարէ ջուր վերոյիչեալ հաստատութիւններին, որի համար խոստանում էր վճարել ջրի վարձ ամէն՝ քան թէ այդ կ'որոշէր քաղաքացիների համար։ Բայց երբ որոշուեցաւ ջրանցքի ջրից օգտուելու համար վճարելի վարձի չափը, քաղաքային վարչութիւնը յայտնեց, որ ջրի վարձ վերոյիչեալ հաստատութիւնների համար նշանակել է միջոցին ¹/₆—¹/₄ կոպէկ, այսինքն ամէնի պակաս՝ քան ինչ որ նշանակած էր քաղաքացիների համար, որոնք վեղրօյին ¹/₄ կ. վճարէին։ Բայց այդ որոշման պատասխան է ըստացուել իժեներական վարչութիւնից, որ ջրի գինը չատ թանկ է նշանակած և թէ, ինչպէս հաղորդում են տեղական ռուս թերթերը, այդ առաջարկութիւնը կ'ընդունի այն ժամանակ, երբ ջրի վարձ կը նշանակուի պակասագրութեան առաջին տարին ¹/₆ կ. վեղրօյին, երկրորդ տարին—¹/₈ կ., իսկ միւս տարիները ¹/₁₂ կոպէկ վեղրօյին։

—

Վաղուց խօսվում է Շիրակի անջրդի դաշտավայրերին ջուր մատակարարելու խնդրի մասին, և եթէ չենք սխալվում, արդէն մի քանի ծրագիրներ էլ կազմուած են դրա համար։ Բայց այժմ, տեղական ռուս թերթերի ասելով, մի քանի ֆրանսիացիներ գնացել են Շիրակ և ուսումնասիրում են երկիրը՝ ջրանցք չինելու ծրագիրը մշակելու համար։

—

Պետերբուրգում, տեղական թերթերի ասելով, կազմակերպվում է մի առանձին ընկերութիւն, որի նպատակն է Կովկասում թէյի անկարան չինել։ Այդ անկարանի համար հարկաւոր եղող ծառերն ու մշակները պիտի Չինաստանից բերուին։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԵՒԱՆ, 31-ին մայիսի.—Լրանում է տարին, որ լուր տարածուեցաւ քաղաքիս մէջ, թէ Վեհափառ Կաթուղիկոսը բարեհաճել է փոխադրել սրբազան Սուրէնեանցին—իր չարգելի փոխանորդին, Երևանից մի ալ քաղաք։ Երևանի ժողովուրդը, որ անխարդախ սիրով կապուած է իր չարգած առաջնորդի հետ՝ լսելով փոխադրութեան լուրը անցեալ թուին, անյապաղ պատրաստեց երկու խնդրագիր չանուն Վեհափառ Կաթուղիկոսի—մէկը ժողովրդի և միւսը Երևանի դիւանատան ծառայողների կողմից՝ նկարագրելով մի առ մի սրբազան Գէորգ Սուրէնեանց եպիսկոպոսի փայլուն չատկութիւնները և ներկայացրեց՝ խնդրելով Նորին Օծութիւնից, որ չփոխադրէ Երևանից Սուրէնեանցին և չզրկէ իրեն մեծարած հովուից։ Թէև Վեհափառը չմերժեց ժողովրդի խնդիրը, բայց և այնպէս հաճ և հաւան դառաւ ինչպէս տրիտուր սրբազան Սուրէնեանցի ակնկալութեան և գործունէութեան՝ աւելի չարգանքի արժանացնելու նպատակում է Աստրախանի թեմին վիճակաւոր առաջնորդ, որ և հաստատում է Բարձրագոյն հրամանաւ անցեալ թուի վերջին ամսում։ Այս լուրը վիշատակվում էր, բայց՝ հաստատութիւն չկար։ Ահա ութ օր է, որ սրբազան Սուրէնեանցը հրաման է ստացել Վեհափառից երթալ Աստրախանի վիճակը։

Երևանի ժողովրդի համար, ինչպէս որ ցաւալի էր իր սիրելի Սուրէնեանցի հրաժարուելու լուրը, և նոյնպէս չարգելի էր Վեհ. Կաթուղիկոսի տնօրինութիւնն և հաճութիւնը, ուստի խորհրդածից զանազան միջոցներով իրրև երախտագիտութեան նշան, մեծարել սրբազան Սուրէնեանցին և այս մասին խնդրեցին, որ քանի մի օր ղոհէ մնալու։ Իսկ սրբազանը քաղաքիս պաշտօնական և վաճառական անձերից հիւրասիրուելով և մեծարուելով պատրաստուեց չտալի դէպի նոր պաշտօնավայրը։ Մայիսի 31-ին լրացաւ սրբազան Սուրէնեանցի Երևանում փոխանորդութեան պաշտօն վարելու վեց ձիզ տարիները և ցանկութիւն էր այսօր իսկ դուրս գալ Երևանից չտասի։ Բայց վաճառականներն և դիւանատների ծառայողները խնդրեցին Քանաքեռ գիւղում ճաշելուց յետոյ ուղևորուել և այնպէս էլ կատարուեց։

Վեց տարուայ ընթացքում սրբազան Սուրէնեանցը իր ամենատևական գովանի չատկութիւններով արժանացած էր ոչ թէ միայն հայերի մեծարանքին և համակրանքին, այլև երևանեցի ռուս և պարսիկ պատուաւոր մարդկանց։ Պէտք է բարեխղճաբար ասել, որ սրբազան Սուրէնեանցը օրինապահութեամբ և եպիսկոպոսավայել ընթացքով մեծապէս փայլեցրեց և բարձրացրեց եպիսկոպոսական անունը ժողովրդի առաջ։

Շաբաթ օրն էր, մայիսի 30-ին առաւօտեան ժամի 9-ին ներկայացան սրբազանին՝ օրհնութիւնը վայելելու թեմական դպրանոցի վարչութիւնը ուսուցիչներով և աչակերտներով և կօնսիստօրի անդամները և ծառայողները առաջնորդարանի դահլիճում։ Կարգացուեցան ճառեր, որոնց իմաստը ղբաղանցի և կօնսիստօրի վարչութիւնների սրտերի զգացմանց երախտապիտական արտայայտութիւններն էր։

Ջմռուացաւ սրբազանը և այլ ևս նկել մղկիթ քանի մի պատուելի մարդիկներով պարսիկների գլխաւոր Խազինին։ Երբ Խազին լսում է սրբազանի գալուստը ընդ առաջում է և ամենամեծ սիրով ընդունում։ Սրբազանը խօսեց 20 րոպէի չափ հայերի և պարսիկների պատմական և դրացի ազգ լինելու մասին և ցանկութիւն յայտնեց որ միչտ սէր և խաղաղութիւն քարոզուի ժողովրդի մէջ։ Խազին էլ չարժուած սրբազանի խօսքերից յայտնեց իր հաճութիւնը։ Ապա սրբազանը ուրախ տրամադրութեան տակ բաժանուեց Խազնից։

Հասաւ կիրակի օրը—մայիսի 31-ն արդէն լուր էր տարածուած թէ սրբազան Սուրէնեանցը պէտք է տայ իր հրաժեշտը Երևանին։ Տակաւին ժամ ութ չէր լրացած, ոստիկանատան առաջնորդներից, դիւանատան ծառայողներից, վաճառականներ, և միւս բոլոր դասակարգերից արհեստաւորներ, քաղաքիս քահանաները և մերձակայ գիւղերից չատ անձեր խմբուեցին Առաջնորդարանի գաւիթը։ Մի տեսակ ուրախութիւն և տխրութիւն նչմարվում էր ամենի երեսի վերայ։

Այդ միջոցին այցելութեան եկաւ Նահանգապետը, երկար խօսակցելուց և բարեկամական հաւասիքը յայտնելուց յետոյ հեռացաւ։ Այցելութիւն եկաւ և ռուսաց հոգևորականների կողմից մի քահանայ, որը յուզուած խօսեց սրբազանի ցոյց տուած սիրոյ և չարգանքի մասին գէպի ռուս հոգևորականները և ասաց՝ «անմոռաց ենք ցլուխան ձեր գէպի մեզ ունեցած քաղցը չարաբերութիւնները» և ընդունելով սրբազանից օրհնութիւն ու չնորհակալք՝ գնաց։ Յետոյ եկաւ պարսիկների Խազին—Երևանի հոգևորականների գը-

լավը։ Նրան էլ ընդունելուց չետո, խաղին ասաց. «Սարը էջմիածնի կաթուղիկոսներն և միաբանութիւնը միշտ օրհնել են և յարդանքներ են ընդունել մեր ազգից, մենք պարտական ենք մեր կեանքի մէջ չմոռանալ Սարը էջմիածինը և նրա միաբան եղբայրներին», դրան սրբազանը պատասխանեց, թէ իւրաքանչիւր ազգի հոգևորականների սեպուհ պարտականութիւնն է սիրով վերաբերուել օտար հոգևորականութեան գլխին և յարգել սրբավայրերը, և սրբան կարելին է սէր և համակրութիւն պահպանել իրեն և դրացի ազգերի մէջ։

Երբ ժողովուրդը խմբուած էր, և պատրաստ էր սրբազանի կառքը, սրբազանը դուրս եկաւ Առաջնորդարանից չրջապատուած քահանաներով և աստիճանաւորներով՝ պատչամբում կանգ առնելով ի դիմաց քաղաքի քահանաներից և նիրկալ եղողներից հայր վանանը մի ոգևորող բերանացի ճառ խօսեց, չայտնելով այսօրուայ Երևանի քահանաների և ժողովրդի սիրալիր պատճառը — սրբազանի հրաժարուելու պատճառով, և բացատրեց սրբազանի վեց տարուայ ընթացքում ունեցած դարձանէութիւնը, փոխանորդական պաշտօնավարութեան մէջ վեհ դիրք բռնելը, եպիսկոպոսական անուան փայլը, օրինակելի կարդապահութիւնը, եկեղեցական և դպրոցական հաչիւներին ուղղութիւն տալը և այլն։ Դառնալով դէպի սրբազանը ասաց. «Սրբազան Հայր, երբ դուք մատ դարձեցիք Երեւան, մենք բոլորս մեր ձայնը բարձրացրինք դէպի Աստուած թէ «օրհնեալ է Իսրայէլի Ձէր Աստուածը, որ խեղճ եկաւ մեզ և ազատեց իւր ժողովրդին», իսկ այսօր ասում ենք. «Օրհնեալ որ գնաս չանուն տեառն, Թագաւորդ Իսրայէլի». հայր վանանի խօսքերը խոր տպաւորութիւն թողեցին բոլորի սրտին։ Փոքր ինչ առաջ գնալով, եկեղեցու դռան մօտ, մի երիտասարդ պ. Ա. Ազարեանց Սարը Սիմէօն եկեղեցու դպրոցների վարչութեան և ժողովրդի կողմից կարդաց գրաւոր մի խմատալից ճառ, որի խօսքերը չարժեցին զ՝ աչուն սրտերը։ Սրանից չետոյ սրբազանը մտաւ եկեղեցին, ուր այնքան լցուած էին, որ տեղ գտնելու տեղ չկար։ Սեղանը համբուրելուց չետոյ դարձաւ դէպի ժողովուրդը մի խմատալի քարոզով, որի մէջ իւր անձի օրինակը առաջ բերելով, քաջալերում էր ժողովրդին խոհեմութեամբ զործ սկսել, չչուտասանել անաչառութիւններից։ Աչնուհետև օրհնեց ժողովրդին, բարեմաղթեց սէր և խաղաղութիւն։ Օրհնելուց չետոյ, սրբազանը աղօթեց և ժողովրդի խուռն բազմութեամբ չբջապատուած դուրս եկաւ եկեղեցուց ճանապարհ ընկնելու։

Ամբողջ սրբազանի աչը առնելով արգիլում էին նրան կառք նստելու։ Վերջապէս խոչանդիմելով ժողովրդին նստից կառքը և գնաց։ Կառքին հետևեցին և բազմաթիւ փայտոնների և ձիաւորներ, որոնք Երևանից Քանաքեռ տանող ամբողջ ճանապարհը բռնել էին, այնպէս որ անցուդարձ անելը դժուարին էր։

Քանաքեռում պատրաստ էր սեղան — ճաչ մի կանաչազարդ այգում ամենատեսակ կերակուրներով և խմիչքներով։ Եւ երբ բոլորիցն սեղանի չորս կողմը, սրբազանը մի բաժակ առաջարկեց Վեհափառ կաթուղիկոսի կենաց և սուրբ էջմիածնի հոսատատութեան համար։ Ցետոյ առաջարկուեցաւ սրբազան Սարգիս Սարեանցի կենաց։

Կարդացուեցան այսպէս երկու ճառեր։

Արդէն ժամի 3-ն էր և սրբազանը պէտք է չարունակէր իւր ճանապարհը. նա ուզի կանգնեց, օրհնեց ազգի ամբողջութիւնը, երևանցոց և մանաւանդ այն պարոններին, որոնք չատկապէս նեղութիւն կրեցին զանազան ծախսից մասին։ Երբ նստից կառքը սկսուեցաւ «Էր հեռանաս» երգը։ Այս միջոցում ամենքը համբուրում էին սրբազանի աջը և ինքը չուզուած արցունքի կաթիլներ թափում էր աչքերից։

Երբ երգը վերջացաւ, կառքը չարունակից իւր ճանապարհը։

Քանաքեռից չրջապատեցին սրբազանի կառքը Կոտէից գաւառի հինգ քահանաները և ձիաւորները ժողովրդից մինչև հանգիստ առնելու տեղը։

Այժմ Երևանի փոխանորդութիւնը թափուր է։ Լսելոյս ենք, որ վհնափառ Կաթուղիկոսը մի արժանաւոր անձն կուղարկէ իրեն փոխանորդ չափաւոր, որ գործերը չմնայ անկատար և որ հնարաւոր լինի ս. Սարգիսեանցի օրինակին իւր գործերով։

Երևանցի

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

— Պետերբուրգից հեռագրում են «Indépendance Belge» թերթին, որ աւգտնական սահմանագիծը որոշող մասնաժողովը վերջնականապէս ընդհատից իւր նիստերը։ Անգլիայի գլխաւոր գէլգպաը, որ իբր թէ մի քանի օրով էր ուղևորել Լօնդոն, ալ ևս չի վերադառնալ Պետերբուրգ։

—Սերբիայի նոր մինիստր-նախագահ Ռիստիչը մտադիր է սկսելու Սերբիայի սահմանադրութեան քննութիւնը։

—«Buda-Pester Correspondez»-ը հաղորդում է, որ նախ տեղի կունենայ իշ. Բիսմարկի և գրաֆ Կալնոկիի տեսակցութիւնը և այնուհետև Գերմանիայի և Աւստրիայի կայսրների տեսակցութիւնը։

—Պարիզի «Opera Comique»-ի ապրեալուց վնասուածների օգտին հանդանակած է 431,000 ֆրանկ։

—Վիեննայից հեռագրում են, որ այնտեղ ոչ ոք չէ անհանգստանում Բիսմարկը առաջին մինիստր դառնալու համար։ Շատ սառն և հանդիստ են վերաբերվում դէպի այդ դէպքը։ Լրագրները չատ զսպուած են խօսում Բիսմարկի մասին։ «Polit. Corresp.»-ի կարծիքով, նրա գլխաւոր չանքը այն կը լինի, որ բարելաւէ Սերբիայի ֆինանսական դրութիւնը։

—Իտալիայի պատգամաւորների ժողովում դաղթավայրերի խնդիրը քննելու միջոցին պատգամաւոր Բօնղի հարց առաջարկեց, թէ արդեօք իսկապէս Իտալիան սիրագտում է Կարմիր ծովի ամբողջ ափը՝ Մուսավայից սկսած մինչև Արաֆալի։ Արտաքին գործերի մինիստրի պատասխանից երևում է, որ իտալական կառավարութիւնը չչտապիր է ուղարկել ֆրանսիական կառավարութեան, որի մէջ ցոյց է տուել, որ ֆրանսիական կառավարութեան պահանջը Դէսսի կղզու և Ջուլալի երկրի վերաչ գերիչխանութիւն ձեռք բերելու մասին—անիրաւացի է, որովհետև արդէն Իտալիան է վայելում գերիչխանութեան այդ իրաւունքը և միւս բոլոր մեծ պետութիւններն էլ ճանաչում են այդ գերիչխանութիւնը։

—«Fremdenblatt»-ը հաղորդում է, որ չնայելով Բիսմարկի հեռագրին, Սերբիայի առաջին մինիստր, բայց Աւստրիան երբէք չի թոյլ տալ, որ իւր չահերին խչդոտ դառնայ նա։

—Պարիզի «Temps» թերթը պնդում է, որ Գերմանիան և Անգլիան թիւրքիային անդադար դրդում էին, որ իրականացնէ միջամտել բոլղարական խնդրին։

—«Neue Freie Presse»-ը հաղորդում է. «Հաստատ աղբիւրներից տեղեկանում ենք, որ Բ. Դուռը հաստատել է բոլղարական կառավարութեան ներկայացրած՝ բոլղարական գահին երկու կանդիդատներին և այդ մասին տեղեկացրել է մեծ պետութիւններին»։ Ինչպէս չայտնի է, այդ կանդիդատներից մինը Բաթտենբերգի իշխան Ալէքսանդրն է։

—Բրիւսէլում պատգամաւորների ժողովը քուէարկել է դալ 1888 թուի ցուցանանդէս կազմելու համար 2,800,000 ֆրանկ։

—Ինչպէս չայտնի է, թիւրքիան ներկայիս բոլղարական խնամակալների ցանկութիւնը ազդալին մեծ ժողովրդավարելու մասին, չայտնել էր, որ ինքը անժամանակ է գտնում ժողովի գումարումը։ Այժմ հեռագիրը չայտնում է, որ բոլղարական կառավարիչները պատասխանելով Թիւրքիայի այդ նկատողութեան, ցոյց են տուել, որ ժողովի գումարումը անհրաժեշտ է։

—Մոլդավիայի Բաթուչան քաղաքում մեծ հրդեհ է պատահել, որին զոհ են գնացել 800 տներ և 7 հոգի մարդիկներից։

—Սերբիայի սկուպչինայի նոր ընտրութիւնները նչանակուած են օգոստոսին կամ սեպտեմբերին։ Յարաչանին, Սերբիայի նախկին մինիստրութեան նախագահը, նչնպէս մտադիր է իբր կանդիդատ դուրս դալու որպէս զի միջոց անենայ իւր քաղաքական ուղղութիւնը պաչպանել չարձակումներից։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Արտերի մկները չնչելու միջոց.—Պէտք է վեր առնել չմանրած կիր և պարզ, սպիտակ չաքար, երկուսն էլ պէտք է ձեռնել, փոշի դարձնել, հատատար մասերով միմեանց խառնել և մի մի բուռ լցնել մկների ծակերի մօտ։ Մկները, չաքարի հետ, կուտեն և կիրը և ներսի կրակից կը ատպռեն ջուր խմել և այդպիսով կը ճարթին։

***

Չհագչեն համալսարան.—Իտալական կառավարութիւնը որոշել է դալ 1888 թուին դարձեան հանդիսաւոր կերպով տօնախմբել Բօլօնիայի համալսարանի ոսկեթուի տօնը։ Երիտասարդ Իտալիայի կրթութեան համար ունեցել է հրապարակով ասելի հին Իտալիայի մտաւորական մեծ գործերը և մտաւորական այնքան կանխաժամ գերազանցութիւնը, քան անափարել Հռոմի կոչ՝ թէև ազդու վակրինութեամբ։ Երբ մտածենք ներկայի ընդհանուր դրութիւնը տասն մկերորդ դարում, կարող ենք հասկանալ, թէ ինչքան մեծ դէպք պիտի լինէր մի համալսարանի հիմնարկութիւնը՝ ներկայիս գարթեցնելու իւր խաւար դրութիւնից, որ միայն իրլանդական թափառաչրջիկ քարոզիչներից էր կախուած։ Հաղիւ թէ ներկայում դանուի մի ուրիչ համալսարան, որ նուիքան հին լինի, որքան Բօլօնիայի համալսարանը։

***

Քրիստոսի ծննդեան միջոցի պատրաստութիւնը.—Երկնային աչ չայտնի մարմինը, որ Աւետարանի խօսքերով մեծ դեր խաղաց Քրիստոսի ծննդեան միջոցին, Ամերիկայի լրագրների ամենուրեք կրկին երևացել է երկնակամարի վերայ, մինչդեռ երկար դարեր դեռ չէր երևացել։ Ամերիկացի հռչակաւոր աստղաբաչխ պրոֆեսսոր Ջօնկլայն, որ բնակում է Կինսուկի նահանդի Լուիզվիլլ քաղաքում, երկնակամարի հիւսիսային-արևմտեան կողմում գտել է այն գիսաւորը, որ երիկ մտիկներին առաջնորդել էր դէպի Բեթղեհէմ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԴՈՐՁԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՕՐԵՕԼ, 9 Յունիսի։ Ալուխտինի գործի վերաբերմամբ, որ մեղադրվում էր Վլօդիմիրսկայալի կողմից արած կեղծագրութեան մէջ, երդուեալ հաւատարմատարները իսկոյն մեղադրական վճիռ կայացրին՝ ընդունելով կեղծագրութեան և 120,000 րուբլին չափազանց ճշմարտութիւնը։ Ալուխտինը դատապարտուած է անորոշ ժամանակով Սիբիր աքսորուելու։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

9 Յունիսի

Լօնդօն $21^{19}/_{32}$, $21^{23}/_{32}$, $21^{19}/_{32}$.
Համբուրգ $183^{3}/_{4}$, $184^{1}/_{4}$, $183^{7}/_{8}$.
Պարիզ $227^{1}/_{2}$, 228, $227^{5}/_{8}$.
Պօլուիմպերիալ 9 ր. 10 կ. սակ.
Մաքս. կուպոն. 177 ր. — կ. սակ.
Արծաթի . . . . 1 ր. 29 կ. սակ.
Բօրսային դիս. $4^{3}/_{4}$ և $6^{0}/_{0}$
Պետակ. բանկի $5^{0}/_{0}$ տոմսեր.
1-ին շրջանի 100 ր. — կ. սակ.
2-րդ » . . 99 ր. 12 կ. գն.
3-րդ » . . 99 ր. 12 կ. գն.
4-րդ » . . 99 ր. 12 կ. գն.
5-րդ » . . 99 ր. 37 կ. սակ.
6-րդ » . . —
100 և 1000 արևելեան փոխառութեան $5^{0}/_{0}$ տոմսեր
1-ին շրջանի 99 ր. 62 կ. գն.
2-րդ » . . $99^{3}/_{4}$ ր. — կ. գն.
3-րդ » . . 100 ր. 55 կ. սակ.
Առաջին ներքին փոխառութեան $5^{0}/_{0}$ տանող գումարի տոմսեր . . . $266^{1}/_{4}$ ր. — սակ.
2-րդ . . . . $245^{1}/_{2}$ ր. — սակ.
$5^{1}/_{2}^{0}/_{0}$ բենտեր $102^{1}/_{2}$ ր. 37 սակ.
Ոսկէ բենտ. 192 ր. — սակ.
Թիֆ. քաղաք. վարկի ընկեր.
օբլեգ. . . . . — ր. Ծախ.
Վերջին նոր $4^{0}/_{0}$ փոխառութիւնը 84 ր. 37 կ. սակ.
Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը խաղաղ է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. 10 Յունիսի։ „Современныя Извѣстія“ թերթի հատուկ վճռաւումը թողլատրած է։

ԱՍԽԱՐԱՏ. Ձեռնարկած է Աստրաքանից լեռների վերայով մինչև պարսկական Ղօչան քաղաքը ճանապարհի շինութեան։

ՕՄՍԿ. Վերնըլ քաղաքում յունիսի 9-ին կրկին պատահեցան յաճախակի բայց թոյլ երկրաշարժեր։ Լաւ է սասցուած, որ Արևմտեան Կարաուլում մայիսի վերջերում սաստիկ երկրաշարժ է եղել։ Ընդհանուր նահանգապետը Վերնըլ է գնում։

ԼՕՆԴՕՆ. Այսօր, ամենազեղեցիկ եղանակով, տեղի ունեցաւ Հանդիսաւոր գնացքը դէպի Վեստմինիստրի աբբայութիւնը։ Կարետժի (արքայական հանդիսաւոր գնացքի) վերայ գտնուող փողոցները ճոխութեամբ զարդարած էին և ժողովրդով լցուած, որ ոգևորութեամբ ողջունում էր իւր թագուհուն։ Մեծ տպաւորութիւն գործեցին թագուհու կառքի առաջից և ետևից ընթացող անգլիական և օտար պըրինցները։ Ուղիղ կէս օրին, թագուհին թնդանօթի ձայներով մըտաւ աբբայութիւնը։ Ժամասացութիւնից չետոյ պրինցներն ու պրինցուհիները հերթով անցան գահի վերայ բազմած թագուհու առաջից և շնորհաւորեցին նրան։ Երեկոեան Լօնդօնը փառաւոր կերպով լուսաւառած էր։

Խմբագիր-հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վլադիկավկազից դուրս են դալիս.

Ա. Հինգ հոգուանոց ուղեկցող կառքը

1) Առ. 7 ժ. զիշերանոցը՝ Պատանուառում, Թիֆլիս հասնում է միւս օրը երեկոեան 6 ժ.

2) Առ. 9 ժ. զիշերանոցը՝ Մլէթում, Թիֆլիս հասնում է միւս օր երեկոեան 8 ժ.

Բ. Վեց հոգուանոց ուղեկցող կառքը

1) Յունիսի 4 ժ. առանց զիշերելու միւս օրը երեկոեան 7 ժ. հասնում է Թիֆլիս։

2) Յունիսի 6 ժ. 30 վ. առանց զիշերելու միւս օրը երեկոեան 9 ժ. 50 վ. հասնում է Թիֆլիս։

1887-ի մայիսի 15-ից Վլադիկավկազի և Թիֆլիսի մէջ կառավարութեան հաւաստեալ կարգն է նշանակուած։

Թիֆլիսից դուրս են դալիս

Ա. Հինգ հոգուանոց ուղեկցող կառքը

1) Առ. ժ. 7-ին Զիշերանոցը Դուշետի կայարանում. Վլադիկավկազ հասնում է միւս օրը երեկոեան ժամը 8-ին։

2) Առ. ժ. 9-ին Զիշերանոցը Մլէթում. Վլադիկավկազ հասնում է միւս օր ժ. 8-ին։

Բ. Վեց հոգուանոց ուղեկցող կառքը

1) Յունիսի ժ. 4-ին, առանց զիշերելու միւս օրը յունիսի ժամը 7-ին հասնում Վլադիկավկազ։

2) Յունիսի ժ. 5-ին, առանց զիշերելու միւս օր երեկոեան 8 ժ. հասնում է Վլադիկավկազ։

ՇՈԳԵՆԱՒԵՐԸ

ԲԱԹՈՒՄԻՑ ԳՆՈՒՄ ԵՆ

Օդեսա—շաբաթ օրերը երեկոեան 8 ժ. շրջանաուռ ընթացքով։
Հինգշաբթիները երեկ. 4 ժ. ուղիղ ընթացքով։
Կ. Պօլիս.—Երեքշաբթիները երեկոեան։

ԲԱԹՈՒՄ ԵՆ ԳԱԼԻՍ

Օդեսայից.—Ուրբաթ օրերը. առաւոտեան ուղիղ ընթացքով։
Երեքշաբթիները կէս զիշերուայ մօտ շրջանաուռ ընթացքով։
Կ. Պօլսից.—Շաբաթ առաւոտները։

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ԵՐԹԵՒԵԿՆԵՐԻ
ԲԺՇԿԱՊԵՏ ՔՈՒԶԱՐԵԱՆՑԻ
(Երևանեան հրապարակամ ծխնամիղոցքի տանը.)

Ընդունելութիւնը ամեն օր.
Առաւօտեան 9—10 ժամին Ա. բաժանում—կանանց և երեխաների հիւանդութիւններ։ 10—12 ժամին Կ. բաժանում—Ներքին չղային հիւանդութիւնների և էլէքտրական բժշկութիւնն. 12—1 ժամին Գ. Քուչարեանց—Արտաքին, վիրաբուժական, աչքի և վիներական (ծածուկ) հիւանդութիւններ։
Սեղեկութիւնները 6—8 ժամը, իսկ չորեքշաբթի և չաբաթ երեկոեան ժամերին կոկորդի և ականջի հիւանդութիւններ։
Ամենայն օր քննվում են ծծմայրների և ծառանների առողջութիւնները և ծաղիկ են կարում։
Վարձ խորհրդի համար առաւօտեան 40 կ., իսկ երեկոեան 60 կոպէկ։
Չքաւորները անվարձ։
Հիմնադիր բժիշկապետ
Գ. ՔՈՒԶԱՐԵԱՆՑ.
X—49

Дозволено цензурою Тифлисъ 10-го Іюня 1887 г. Տպարան Մ. Գ. Ռոտինեանց Типографія М. Д. Ротиніанцъ Гол. пр., д. №41